

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ «ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ»
ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

*Բանալի բառեր – Հայաստան, Հայկական մարզ, Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերո,
Բ. Բ. Շոպեն, թուրք-թաթարներ, Ադրբեջան, ատլաս, պատմական սկզբնաղբյուրներ*

Տարիներ շարունակ Հայաստանի և Արցախի դեմ թուրք-թաթարների սանձազերծած տեղեկատվական պատերազմը օր օրի ավելի է սաստկանում և դառնում առավել ընդգրկուն: Ադրբեջանի և Թուրքիայի պետական կառույցների տեղեկատվական այս արշավը նպատակ է հետապնդում «պատմականորեն» արդարացնել իրենց որդեգրած ռազմամոլական քաղաքականությունն ու ավելի հեռուն գնացող իրական նպատակները: Այդ ճանապարհին փորձ է արվում տեղեկատվական ահռելի հոսքերի միջոցով ուղղորդել և ազդել ինչպես մեր՝ հայ հասարակության, այնպես էլ սեփական բնակչության գիտակցության վրա: Այս խնդիրներն իրականացնելու համար օգտագործվում են առկա բոլոր ռեսուրսները և տեղեկատվական դաշտի ընձեռած հնարավորությունները՝ դրանցում ներգրավելով նաև օտարերկրյա քաղաքական գործիչների, գիտնականների, գրողների, դերասանների, երգիչների, մարզիկների և այլոց մասնակցությունը:

Այսպիսով, հետհայացք նետելով թուրք-թաթարների գործընթացների տրամաբանությանը, հարկ է արձանագրել, որ Հայաստանի և Արցախի դեմ տեղեկատվական պայքարը լայն թափ է ստացել դեռևս 1960-ական թվականներից: Հսկայածավալ աշխատանք է տարվում ընդամենը մի քանի տասնամյակ Ադրբեջան կոչվող պետական կազմավորմանը վերագրելու հնագույն ժողովուրդներին բնորոշող քաղաքակրթական առանձնահատկությունները (հնագույն պետականություն, ավանդույթներ, մշակույթ և այլն)¹: Կեղծիքները «հիմնավորելու» նպատակով շրջանառվում է պատմագիտական «փայլուն» մտքի արգասիք այն «թեզը», որ տարածաշրջանում հայերը եկվորներ են, իսկ ադրբեջանցիները՝ տեղաբնիկների՝ աղվանների (Աղվանից թագավորության) հետնորդները: Ըստ նրանց՝ ադրբեջանցիների՝ աղվանների ժառանգներ լինելու «թեզը» կհիմնավորվի, օրինակ, զավթած տա-

¹ 1960-ական թվականներին թափ առած հակահայկական գրականության հեղինակներից են Զ. Բույնաթովը, Ֆ. Մամեդովը, Բ. Ալիևը, Կ. Մահմեդ-զադեն, Դ. Ախունդովը և այլք:

րածքներում քրիստոնեական մշակութային արժեքների¹ առկայության հանգամանքը, որից բխում է այն «փաստը», որ հայկական համարվող պատմամշակութային արժեքները ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ աղվանա-ադրբեջանական²:

Միննույն ժամանակ թուրք-թաթարներն իրենց իրավամբ համարում են թյուրքալեզու միջինասիական ցեղերի հետնորդները: Ջորջինակ, Ադրբեջանում և Թուրքիայում լայն շրջանառվում է «մեկ ազգ, երկու պետություն»³ կարգախոսը:

Իրականում բացահայտ սուտն ու կեղծիքը, հակասական և հակագիտական «թեզերը» իրենց իսկ՝ թուրք-թաթարական «պատմագրության» մեջ առաջ են բերել մեծ խառնաշփոթ: Այդ «պատմություններում» զավեշտային նաև այն է, որ տվյալ տարածաշրջանում ապրած ազգերի ու ժողովուրդների հայրենիքը, նյութական և մշակութային ժառանգությունն անվարան յուրացնողները, այնուամենայնիվ, չեն խուսափում աշխարհին ներկայանալ որպես «մեծ դավադրության զոհեր»: Դրա վառ օրինակն է Ադրբեջանի արտոգործնախարարության հրատարակած «Պատերազմ Ադրբեջանի դեմ: Մշակութային ժառանգության կողմնորոշում» գիրքը⁴, որի հիմքում վերոբերյալ մտավարժանքներն են՝ բնականաբար «խեղճուկրակ» թուրք-թաթարի տեսանկյունից:

Ներկա փուլում հայ ժողովրդի դեմ կիրառվող տեղեկատվական պատերազմի սահմանները հասել է այն եզրագծին, որ թուրք-թաթարները փորձում են ջանասիրաբար օգտագործել հայ պատմագրության հայր Մովսես Խորենացու աշխատությունները մեր իսկ ազգային արժեքների և ինքնիշխանության դեմ:

2016 թ. Բաքվում հրատարակված «Ադրբեջանի պատմական հուշար-

¹ Աղվանքի թագավորության պաշտոնական՝ Աղվանից եկեղեցին, Արևելյան հակաքաղկեդոնական եկեղեցիներից է: Այն ընդունել է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու գահերեցությունը և «ի հոգևորս» ենթարկվել նրան: III դարից սկսած՝ բուն Աղվանքում ձևավորվել են քրիստոնեական համայնքներ: Տե՛ս Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Երևան, 2002, էջ 41-42, **Մովսես Կաղանկատվացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

² Օրինակ, իրենց վերագրելով հայկական պատմամշակութային արժեքներից խաչքարերը, նրանք փորձում են «խաչքար»-ը փոխարինել «խաչդաշ» («դաշ»-քար) թյուրքական ծագման տերմինով: Սակայն միննույն ժամանակ չեն խորշում իրենց իսկ տարածքներում գտնվող նույն այդ հուշարձանները կեղծել՝ ջնջելով եկեղեցիների վրայի հայկական գրություններն ու խաչերի պատկերները կամ դրանք հողին հավասարեցնել: Այդպիսի վառ օրինակներից է Ջուղայի միջնադարյան հազարավոր հայկական խաչքարերի ճակատագիրը, որոնք 2005 թ. զինվորականները ջարդուփշուր արեցին՝ տարածքը վերածելով զինավարժությունների համար նախատեսված վայրի:

³ Տե՛ս Azərbaycan-Türkiyə “bir millət iki dövlətdir” - heç bir kripto buna mane ola bilməz // <https://1news.az/az/news/azerbaycan-turkiye-bir-millet-iki-dovletdir-hec-bir-kripto-buna-mane-ola-bilmez> (հասանելի էր 22.07.2020 թ.):

⁴ Տե՛ս War Against Azerbaijan. Targeting Cultural Heritage, Ministry of Foreign Affairs, Republic of Azerbaijan, 2007:

ձաններն ու տեղանունները: Մատենագիտություն»¹ գրքի «Արևմտյան Ադրբեջանի պատմական հուշարձաններն ու տեղանունները» բաժնում «հրաշքով» տեղ է գտել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը², որտեղ որպես ծանոթագրություն նշված է, որ այն տեղեկություններ է հաղորդում Ադրբեջանի պատմական հուշարձանների մասին, այն է՝ Գառնիի ամրոցի, Գառնիի տաճարի, Դվինի պալատի, Դվինի տաճարի³: Նույն «մատենագիտության» մեջ կգտնենք նմանատիպ խաչագողության բազմաթիվ այլ աղաղակող օրինակներ, ըստ որոնց՝ թուրք-թաթարական են համարվում ուրարտական շրջանի Թեյշեբանի կամ Կարմիր բլուր բերդաքաղաքը, Զվարթնոցը՝ «Երկնային Զվարթունների (Հրեշտակների) տաճարը», Գոշավանքը և մյուս բոլոր հայկական մշակութային հուշարձանները⁴: Նմանատիպ հրապարակումներն այսօր արդեն համատարած են⁵:

2012 թ. նրանք հրատարակել են այսպես կոչված «Ադրբեջանի հին քարտեզների հավաքածուն»⁶: Ըստ համացանցում եղած գովազդային հայտարարության՝ այն բաղկացած է պատմական և աշխարհագրական քարտեզներից, որոնցում արտացոլված է «Ադրբեջանի տարածքը» տարբեր ժամանակաշրջաններում:

Նմանօրինակ հիվանդ երևակայության ու մտավարժանքների արդյունք է Էմիր Էյվազի՝ համացանցում տեղադրված հրապարակումների շարքը՝ ««Մեծ Թուրանի» երկյուղը ստիպում է հայերին նենգափոխել հին քարտեզները»⁷ վերնագրով:

2015 թ. Բաքվում հրատարակվում են «Ադրբեջանի ազգային ատլաս»-ը և

¹ Տե՛ս Сафаралиева Г., Исторические памятники и топонимы Азербайджана. Библиография, Баку, 2016:

² Տե՛ս Хоренский М., История Армении, посмертное изд. фонд Н. О. Эмина, вып. 1, Москва, 1893:

³ «В книге даны сведения об исторических памятниках Азербайджана: Крепости Гарни, Храм Гарни [с. 22, 132]; Дворец и Храм Двин [с. 148]». Տե՛ս Сафаралиева Г., նշվ. աշխ., էջ 396:

⁴ «В книге даны сведения об исторических памятниках Азербайджана: Крепость Тейшебани [с. 33-34], Крепость Колагирян: Тейшеба [с. 22, 47], Храм небесных ангелов (Гек мелеклери) [с. 33]». Տե՛ս նույն տեղում, էջ 396-397:

⁵ Տե՛ս Alakbarli A., Les monuments d'Azerbaïdjan Ouest, Baku, 2007, Алиярлы С. (ред.), История Азербайджана: с древнейших времен до 70-х гг. XIX в., Баку, 2008, Алиев К., Нахичевань в ареале античного Азербайджана (Azərbaycan arxeologiyası və etnoqrafiyası), 2006, № 2, s. 60-68, Алиев И., Мамедзаде К., Албанские памятники Карабаха, Баку, 1997:

⁶ Տե՛ս Собрание старинных карт Азербайджана. Факсимильное издание 1667-1914 гг., СПб., 2012 // <http://www.alfaret.ru/item.php?prod=2204&subid=130&catid=194> (հասանելի էր 22.07.2020 թ.): Հրատարակիչները նշում են, որ քարտեզներն ընտրված են XVI-XIX դդ. հրատարակված ատլասներից և գիտական, պատմական ու հավաքածու հետաքրքրություն են ներկայացնում: Ըստ նրանց գործելաոճի՝ կովկասյան թուրք-թաթարները չեն խնայել ֆինանսական միջոցներ և հրատարակել են շքեղ ու թանկարժեք քարտեզների հավաքածու՝ կաշվեպատ, ոսկե դրոշմանկարով, մետաքսե էջանշանով և այլն:

⁷ Տե՛ս Эйваз А., Страх перед «Великим Тураном» заставляет армян искажать старинные карты // <http://gulustan.ws/2012/04/strax-pered-velikim-turanom/> (հասանելի էր 22.07.2020 թ.):

«Հարավային Կովկաս, 1903 թ.» քարտեզը: Ըստ հրատարակիչների՝ այս աշխատանքներում ի մի են բերված «ադրբեջանական հողերին» առնչվող ամբողջ տեղեկատվությունն ու պատմությունը¹:

Հարկ է նշել, որ այս աշխատանքները հրատարակվում են կովկասյան թուրք-թաթարների առաջնորդ Ի. Ալիևի բարձր հովանավորությամբ և քաջալերմամբ: Այդ մասին են վկայում Ալիևի հրապարակային որոշ ելույթներ, որոնք արժանի են առանձնակի ուշադրության: Այսպես, 2018 թ. նա բարբառում է «Իրեվանի (Երևանի – Վ. Մ., Գ. Ղ.) խանությունը, Զանգեզուրը և Գեյջեն (Գյոքչան՝ Սևանա լճի ավազանի մեծագույն մասը – Վ. Մ., Գ. Ղ.) ադրբեջանական ժողովրդի պատմական հողերն են», «Երևանը մեր պատմական տարածքն է, և մենք՝ ադրբեջանցիներս, պետք է վերադառնանք այդ պատմական հողը: Դա մեր քաղաքական և ռազմավարական նպատակն է»² «մտորումները»: Իսկ 2019 թ. նա արտաբերում է, որ «Լեռնային Ղարաբաղը միշտ եղել է Ադրբեջանի անբաժանելի մասը», իսկ «բոլոր հին քարտեզներում, այդ թվում՝ ցարական Ռուսաստանի քարտեզներում, Լեռնային Ղարաբաղի բոլոր տեղանվանումներն ունեն ադրբեջանական ծագում»: Ալիևը նաև փաստում է, թե իբր «Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը փոխվել է 19-րդ դարում՝ հայերի ներգաղթի պատճառով»³ և այլն:

Ըստ թուրք-թաթարական պատմագրության «փայլուն ձեռքբերումների» և Ադրբեջանի «քաղաքական» ղեկավարության հայտարարությունների՝ Հայաստանի և Արցախի հանրապետությունները ընդամենը Արևմտյան Ադրբեջանն են⁴, իսկ հայկական մշակութային հարստությունը՝ թուրք-թաթարական: Ակնհայտ է, որ այս ամենը կրում է համակարգված բնույթ, որին Ադրբեջանում լծվել են «մեծից փոքր»:

Ամենինն նպատակ չհետապնդելով գնահատել ու անդրադառնալ տեղեկատվական պայքարի խնդիրներին՝ կցանկանայինք միայն նշել, որ հայկական կողմը բավարար ջանքեր չի գործադրում այս զեղծարարություններին դիմակայելու և արժանի պատասխան տալու ուղղությամբ:

Վերոբերյալից ակնհայտ է, որ կովկասյան թուրք-թաթարները, նենգափոխելով իրականությունը և հետապնդելով հեռահար քաղաքական նպատակներ, հատկապես շատ են կարևորում Ռուսական կայսրության տիրապետության ժամանակաշրջանը՝ թիրախավորելով պատմաաշխարհագրա-

¹ <https://www.trend.az/azerbaijan/society/2359527.html> (հասանելի էր 22.07.2020 թ.):

² Տե՛ս **Алиев И.**: стратегической целью Азербайджана является «возвращение» Еревана // <https://topwar.ru/135683-aliev-strategicheskoy-celyu-azerbaydzhana-yavlyetsya-vozvrashchenie-erevana.html> (հասանելի էր 22.07.2020 թ.):

³ Տե՛ս **Алиев И.**: «На всех старых картах все названия местностей Нагорного Карабаха имеют азербайджанское происхождение» // <https://galatv.am/ru/2787996/> (հասանելի էր 22.07.2020 թ.):

⁴ Տե՛ս **Гафарова Г.**, Памятники Западного Азербайджана: (книга-альбом), Баку, 2013:

կան սկզբնաղբյուրներն ու պատմական (հին) քարտեզները¹: Նրանք նույնիսկ չեն խորշում այլազգի գրչակ-մարտիկներին հավաքագրել «սրբազան» տեղեկատվական պատերազմին՝ հաջողություններ արձանագրելու նպատակով: Այսօրինակ վառ ներկայացուցիչ է մոսկվաբնակ Օ. Բուլանովան: Այսպես, 2011 թ. նա հրատարակել է «Ադրբեջան. մշակույթ, ավանդույթներ, մարդիկ» ռուսալեզու գիրքը², որի էլեկտրոնային հայտագրում տեղ են գտել հետևյալ ուշագրավ տողերը. «Այս գիրքը մոսկվաբնակ ռուսուհու վադեմի և ջերմ սիրո պտուղն է հնագույն և գեղեցիկ մեր երկրի հանդեպ: Այս գրքի արժեքը նախևառաջ այն է, որ Ադրբեջանի մշակույթի մասին գրել է ոչ ադրբեջանցի հեղինակը»: Այս շարադրանքի հաջորդ մասում փորձ է արվում գրքի ընթերցողին հավաստիացնել, որ այն գերծ է շահարկումներից, հղում է արվում այն կանխավարկածին, որ եթե հեղինակը լիներ ադրբեջանցի, շատ հավանական է, որ նա՝ ադրբեջանցին, իր հզոր ժառանգությունից ոգեշնչված, ինչ-որ հարցում կանխակալություն կցուցաբերեր³:

Մեր պրպտումներից պարզ դարձավ, որ Ադրբեջանի մասին վերոհիշյալ «անկողմնակալ» գիրքը Օ. Բուլանովայի միակ աշխատանքը չէ: Պարզվում է, որ նա ջերմ սեր է տածում ոչ միայն Ադրբեջանի մշակույթի, ավանդույթների և մարդկանց, այլ նաև պատմության ու պատմական աշխարհագրության նկատմամբ: Օրինակ, նրան են պատկանում «Ադրբեջանը և Դյու Բուա դը Մոնպերոյի «Ճանապարհորդություն Կովկասի շուրջը» 1833-1834 թթ.», «1833-1834 թթ. Ադրբեջանը և Էրիվանը Դյու Բուա դը Մոնպերոյի նկարներում (նկարներ)» և «Բաքվում անարխիստների հայտնվելու պատմությունը» հոդվածները⁴:

Փորձենք անդրադառնալ մեկ ամբողջականություն կազմող Օ. Բուլանովայի երկու՝ «Ադրբեջանը և Դյու Բուա դը Մոնպերոյի «Ճանապարհորդություն Կովկասի շուրջը» 1833-1834 թթ.», «1833-1834 թթ. Ադրբեջանը և

¹ Օրինակ, 2020 թ., Ի. Ալիևը մասնակցել է թանգարաններից մեկի բացմանը: Ցուցասրահում ներկայացված պատմական քարտեզների վրա տեսնելով Ուրարտու անունը և չհամակերպվելով այն մտքի հետ, որ այդ ժամանակաշրջանում Ադրբեջան պետություն չի եղել, տնօրենությունից պահանջել է քարտեզի վրա ավելացնել այսպես կոչված «հնագույն ադրբեջանական» տեղանունները, իսկ հաջորդ քարտեզի վրա Իջևան, Սևան, Հրազդան և մի շարք այլ տեղանուններ փոխարինել «ադրբեջանականով» // <https://armenpress.am/rus/news/1007596.html> (հասանելի էր 22.07.2020 թ.):

² Буланова О., Азербайджан: культура, традиции, люди, Москва, 2011:

³ Տե՛ս նույն տեղում // https://www.livelib.ru/book/1001163391-azerbajdzhan-kultura-traditsii-lyudi-oksana-bulanova?utm_source=livelib&utm_campaign=viewed&utm_medium=bottom&utm_content=book (հասանելի էր 22.07.2020 թ.):

⁴ Տե՛ս Բуланова О., Азербайджан и «Путешествие вокруг Кавказа» Дюбуа де Монпере в 1833-1834 г. // Azer History: <https://azerhistory.com/?p=8880> (հասանելի էր 22.07.2020 թ.), նույնի՝ Азербайджан и Эривань 1833-1834 годов в зарисовках Дюбуа де Монпере (фото) // Azer History: <https://azerhistory.com/?p=8883> (հասանելի էր 22.07.2020 թ.), նույնի՝ История появления анархистов в Баку // Azer History: <https://azerhistory.com/?p=10077> (հասանելի էր 22.07.2020 թ.):

Էրիվանը Դյու Բուա դը Մոնպերոյի նկարներում (նկարներ)» հոգվածներին: Առաջինը նա սկսում է հետևյալ տողերով. «Ընդհանուր առմամբ Կովկասի և մասնավորապես Ադրբեջանի հնագույն մշակույթը միշտ գրավել է ճանապարհորդներին, հետազոտողներին, պատմաբաններին, նկարիչներին...»¹:

Այնուհետև նա ընդհանուր գծերով փորձել է անդրադառնալ Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոյի կենսագրությանը, հիշատակել է նրա հանրահայտ ուսուցիչների՝ աշխարհագետ Կառլ Ռիթթերի, երկրաբան Լեոպոլդ ֆոն Բուխի և բնագետ Ալեքսանդր դը Հումբոլդտի անունները: Շատ համառոտ ներկայացրել է 1831-1834 թթ. Ֆրեդերիկ Դյու Բուայի գիտահետազոտական ճանապարհորդությունը և դրա արդյունքում հրատարակած աշխատությունները՝ «Ճանապարհորդություն Կովկասի շուրջ, չերքեզների ու աբխազների մոտ, Կովխիդա, Վրաստան, Հայաստան և Ղրիմ» վերտառությամբ վեցհատորյա աշխատությունը², և «Ատլասը»՝ «Ճանապարհորդություն Կովկաս, չերքեզների ու աբխազների մոտ, Կովխիդա, Վրաստան, Հայաստան և Ղրիմ»³:

Բարձր գնահատելով Ֆրեդերիկ Դյու Բուայի աշխատությունները՝ Օ. Բուլանովան հիշատակում է մի շարք հայտնի անձանց՝ Ալեքսանդր դը Հումբոլդտի, Պյոտր Կեպենի, Մարի-Ֆելիսիտե Բրոսեի, ինչպես նաև եվրոպական պետությունների և Ռուսաստանի գիտական շրջանակների արձագանքներն ու նրա աշխատություններին տրված գնահատականները: Նա հատուկ նշում է այն փաստը, որ ռուսական կառավարությունը դրամական մեծ աջակցություն է ցուցաբերել Ֆրեդերիկ Դյու Բուային «Ատլասի» հրատարակության համար, իսկ Նիկոլայ I-ը նրան պարգևատրել է Սբ. Ստանիսլավի շքանշանով:

Օ. Բուլանովան գրում է. «Ուշագրավ է, որ հետաքրքրասեր Մոնպերոյին տրամադրված «ուղեկցորդները, էսկորտները, պահակախումբը» (проводники, эскорты, конвой) 1827 թ. ռուսական կայսրության գրաված և Նիկոլայ I-ի՝ 1828 թ. մարտի 21-ի հրամանագրով Հայկական մարզի վերածված Էրիվանի խանությունը անվանում էին բացառապես Հայաստան, որի վկայությունն է աշխատության ամբողջական վերնագիրը՝ «Ճանապարհորդություն Կովկասի շուրջ, չերքեզների ու աբխազների մոտ, Կովխիդա, Վրաստան, Հայաստան և Ղրիմ»: Ոչ մի խոսք ադրբեջանական խանությունների մասին: Թեև նա եղել է առնվազն չորս՝ Գյանջայի, Ղարաբաղի, Նախիջևանի և Էրիվանի խանություններում:

¹ Տե՛ս **Буланова О.**, Азербайджан и «Путешествие вокруг Кавказа» Дюбуа де Монпере в 1833-1834 г.:

² Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, Voyage autour du Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, Librairie de Gide, Editeur des annales des voyages, t. I-III, IV, V-VI, Paris, 1839, 1840, 1843:

³ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, Voyage au Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, ATLAS, Neuchatel en Suisse, chez l'Auteur, Paris, 1843:

Հստ երևույթին, ով վճարում է՝ երաժշտությունն է պատվիրում... Քանի որ նկարները, սխեմաները և քարտեզները հրապարակելու հնարավորությունը՝ հսկայական շքեղ Ատլասի տեսքով, ամբողջովին Ռուսաստանի կառավարության և անձամբ Նիկոլայ I-ի վաստակն է¹:

Նա մեջբերում է Ֆրեդերիկ Դյու Բուայի երախտիքի խոսքը՝ ուղղված ռուսական կառավարությանը «Ատլասը» հրատարակելու և ընձեռած օգնության համար: Այնուհետև կարճ ներկայացնում է Ատլասի կառուցվածքը և գրում նրա արժանիքների մասին:

Երկրորդ՝ «1833-1834 թթ. Ադրբեջանը և Էրիվանը Դյու Բուա դը Մոնպերոյի նկարներում (նկարներ)» հոդվածում Օ. Բուլանովան հիմնականում ներկայացրել է «Ադրբեջանը» 11 նկարների միջոցով՝ շեշտելով Ատլասի գլխավոր արժանիքներից մեկը՝ հետագայում անհետացած ճարտարապետական հուշարձանների պատկերների պահպանումը: Այս նկարները նա վերնագրել է և գրել էլեկտրոնային կայքի հասցե՝ azerhistory.com:

Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատությունների մասին մեր երկրում հրատարակված որևէ նյութ գտնելու ջանքերն ապարդյուն անցան: Այդ բացթողումը լրացնելու նպատակով մեր նախորդ հրապարակումներում փորձել ենք ներկայացնել հանիրավի մոռացության մատնված Դյու Բուա դը Մոնպերոյի կյանքն ու գործունեությունը², անդրադարձել ենք նրա գիտական ժառանգությանը³: Լինելով բազմակողմանի զարգացած անձնավորություն՝ նա

¹ Տե՛ս **Буланова О.**, նշվ. աշխ.:

² Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոն (1798-1850) շվեյցարացի (ծագումով ֆրանսիացի) հայտնի ճանապարհորդ է և գիտնական: 1831-1834 թթ. նա միայնակ սկսում է վտանգներով լի իր գիտահետազոտական ճանապարհորդությունը դեպի Ղրիմ և Կովկաս: Այդ ընթացքում հավաքած, մշակած ու խմբագրած նյութերի հիման վրա 1839-1843 թթ. Փարիզում հրատարակվում է նրա վեց հատորյա «Ճանապարհորդությունը», իսկ 1843 թ. Նոշատելում (Շվեյցարիա) լուս է տեսնում նրա կազմած «Ատլասը»: Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատանքը: «Ճանապարհորդությունը» ֆրանսերեն հրատարակվելուց հետո, ամբողջությամբ թարգմանվում է գերմաներեն: Փարիզի Աշխարհագրական ընկերությունը նրան պարգևատրում է Մեծ մրցանակով (Grand prix): Լոնդոնի երկրաբանական ընկերությունը բարձր է գնահատում կատարված աշխատանքը, իսկ ռուսական կառավարությունը 20.000 ռուբլի դրամական պարգև է հանձնում Դյու Բուա դը Մոնպերոյին «Ատլասը» հրատարակելու համար: Նիկոլայ I-ը նրան պարգևատրում է Սբ.Ստանիսլավի շքանշանով և նվիրում ադամանդակոտ մատանի: Պրուսիայի թագավորը գիտության բնագավառում հաջողությունների համար նրան պարգևատրում է Մեծ ոսկե մեդալով (Grande medaille d'or): Լոնդոնի, Բեռլինի և Սանկտ Պետերբուրգի Աշխարհագրական ընկերությունները նրան ընտրում են իրենց թղթակից անդամ: Տե՛ս **Jeanneret F.A.M., et Bonhôte J.H.**, Biographie Neuchâteloise, t. 1, Locle, chez Eugène Courvoisier, Libraire-éditeur, 1863, p. 279-280:

³ Տե՛ս **Մխիթարյան Վ.**, Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոյի քարտեզը ադրբեջանական գիտական և քաղաքական շահարկումներում // «ՀՀ», 2014, թիվ 3, էջ 34-52, *նույնի* Les cartes françaises de la Transcaucasie comme sources historiques // L'Arménie et la Géorgie en dialogue avec l'Europe, du Moyen Âge à nos jours, Paris, 2016, p. 274-282, *նույնի* Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերո՝ այդչափ հայտնի և մեզանում այդքան անծանոթ շվեյցարացի ճանապարհորդը (պատմաաշխարհագրական և քարտեզագրական ուսումնասիրություն) // «ՀՀ և մերձավոր

իր աշխատություններում արձանագրել է տվյալ ժամանակաշրջանում Այսրկովկասում և Ղրիմում տիրող իրավիճակը, շրջանառության մեջ է դրել պատմական, աշխարհագրական, քարտեզագրական և մշակութային հսկայական նյութ, որը հնարավորություն է ընձեռում կատարել համեմատություններ և վերլուծություններ: Դրանցում կան, անշուշտ, որոշակի անճշտություններ, բացթողումներ, սակայն աներկբա կարելի է փաստել, որ դրանք մեզ համար անգնահատելի պատմական սկզբնաղբյուրներ են:

Անդրադառնալով Օ. Բուլանովայի հրապարակած առաջին՝ «Ադրբեջանը և Դյու Բուա դը Մոնպերոյի «Ճանապարհորդություն Կովկասի շուրջը» 1833-1834 թթ.» հոդվածին, նշենք, որ վերնագրից ակնհայտ երևում է, որ այն, մեղմ ասած, շատ հավակնոտ է: Զավեշտալին այն է, որ հոդվածագիրը պատմական տվյալ ժամանակահատվածում գոյություն չունեցող «Ադրբեջան» պետությանն ու «ադրբեջանցի» կոչվող ժողովրդին ներկայացնում է որպես հնագույն մշակույթ կրողների: Նա «անկեղծորեն» զարմանում է, թե ինչպես կարող էր Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատությունների վերնագրերում տեղ գտնել Հայաստան երկրանունը, երբ նրա ճանապարհորդությունը անցնում էր ադրբեջանական՝ Էրիվանի (ըստ Ի. Ի. Շոպենի¹ ուսումնասիրության՝ Հայկական մարզի կենտրոն Էրիվան քաղաքին տեղափոխվելը՝ հայերը կոչում էին Էրեվան)², Նախիջևանի, Ղարաբաղի և Գանջայի խանությունների տարածքներով և չհիշատակել Ադրբեջանի մասին: Ընդ որում, Հայկական

արտասահմանի երկրների տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները», Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2017, էջ 82-90, **Մխիթարյան Վ., Ղամբարյան Գ.**, «Սևանա լճի ավազանի քարտեզը Հայաստանում՝ գծահանված ռուս ինժեներների կողմից 1832 թ.»՝ որպես պատմական սկզբնաղբյուր // «ՀՀ», 2019, թիվ 3, էջ 35-48:

¹ Ի. Ի. Շոպեն (1798-1870), ռուս (ծագումով ֆրանսիացի) պետական գործիչ, ազգագրագետ և պատմաբան: 1829-1832 թթ. զբաղվել է Հայկական մարզի (Էրեվանի և Նախիջևանի խանություններ) մանրամասն ուսումնասիրությամբ՝ նյութեր հավաքելով ապագա գրքի համար: Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել նրա կատարած ուսումնասիրությունը: 1840 թ. նրա «Հայկական մարզի կամերալ նկարագրություն» աշխատությունը արժանանում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ազգագրագետների դրական կարծիքին (գրախոսներ Մ. Ի. Բրոսսե և Պ. Ի. Կեպպեն), իսկ այնուհետև Ս. Պետերբուրգի կայսերական գիտությունների ակադեմիայի Դեմիդովյան պարգևին: 1830 թ. նա ստանձնել է Հայկական մարզային կառավարման խորհրդականի պաշտոնը: 1833 թ. եղել է Հայկական մարզի եկամուտների և պետական գույքի դեպարտամենտի նախագահը, իսկ այնուհետև աշխատել է որպես Այսրկովկասյան երկրամասի գլխավոր կառավարչի՝ հատուկ հանձնարարությունների գծով պաշտոնյա: 1838 թ., տեղափոխվելով Սանկտ Պետերբուրգ, աշխատանքի է անցել Պետական գույքի նախարարությունում: 1840 թ. ի վեր եղել է Ներքին գործերի նախարարության վիճակագրական վարչության թղթակից անդամ // https://ru.wikipedia.org/wiki/Шопен,_Иван_Иванович (հասանելի էր 22.07.2020 թ.):

² См. у Шопен И. И., Исторический памятник состояния Армянской области в эпоху её присоединения к Российской империи, СПб., 1852, с. 463:

մարզ ասելով նա նկատի ունի միայն Էրեվանի խանությունը, որը ճիշտ չէ¹:

Հողվածագիրը՝ բարձր գնահատելով Դյու Բուա դը Մոնպերտյի աշխատությունները, այնուհանդերձ բացահայտ մեղադրանքներ է հնչեցնում նրա հասցեին և նրան պարսավում կողմնակալության մեջ. «Ըստ երևույթին, ով վճարում է, նա և երաժշտությունն է պատվիրում, – գրում է նա, – քանի որ նկարների, սխեմաների և քարտեզների հրապարակելու հնարավորությունը, հսկայական շքեղ Ատլասի տեսքով, ամբողջովին Ռուսաստանի կառավարության և անձամբ Նիկոլայ I-ի վաստակն է»²:

Հասկանալի է, որ ըստ Օ. Բուլանովայի՝ վերոհիշյալ տողերը առաջին հերթին ուղղված են «վճարող և երաժշտություն պատվիրող» կողմին՝ ռուսական իշխանություններին, հանձին Նիկոլայ I-ի: Ցարի Դյու Բուա դը Մոնպերտյին աջակցելու փաստը պայմանավորել «խեղճ ադրբեջանցիների» հանդեպ կազմակերպված ու իրականացված երկկողմ ռուսական կառավարության և մեծանուն ճանապարհորդի միջև կնքված «դավադրությամբ», չակնարկելով անգամ դրա դրդապատճառները, մեղմ ասած, անհեթեթություն է: Իսկ այդ «դավադրության» մյուս շահառու կողմը, ըստ Օ. Բուլանովայի՝ «եզրահանգումների», ինչպես հասկանում ենք, հայկական կողմն է:

Եվ այն, որ «Ատլասի» տպագրության ծախսերը հոգացել է ռուսական իշխանությունը, իսկ հրատարակված «ճանապարհորդությունն» ու «Ատլասը» արժանացել են ռուսական կայսեր բարձր գնահատանքին, բացարձակապես հայտնի փաստեր են³: Ավելին, Դյու Բուա դը Մոնպերտյի ստեղծագործությունները, ինչպես արդեն նշեցինք, պակաս գնահատանքի չեն արժանացել Փարիզում, Լոնդոնում և Բեռլինում, և կարծես թե հողվածագիրը դրան ևս տեղյակ չէ:

Իսկ այն հանգամանքը, որ Դյու Բուա դը Մոնպերտյի գիտաճանաչողական ուղևորության անվտանգ իրականացմանը նպաստել են նաև տեղական իշխանությունները, այդ մասին են վկայում նաև հեղինակի գրառումները⁴:

Ինչ վերաբերում է Դյու Բուա դը Մոնպերտյի «ուղեկցորդներին, էսկորտներին և պահակախմբերին» (проводники, эскорты, конвой), տեղեկացնենք, որ նա Հայաստան երկրի մասին նրանցից տեղեկություններ ստանալու որևէ կարիք չուներ: Բավական է ծանոթանալ նրա աշխատություններին, և պարզ կդառնա, որ նա ոչ միայն լավ տիրապետում էր այդ տեղեկատվությանը,

¹ Ըստ 1828 թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի պայմանագրի՝ ռուս-պարսկական պետական սահմանագիծը հարավում հաստատում է Արաքս գետը: Պարսկաստանը պաշտոնապես ճանաչում է Էրեվանի ու Նախիջևանի խանությունների միացումը Ռուսաստանին: Իսկ 1828 թ. մարտի 21-ին Նիկոլայ I-ի հրամանագրով Արևելյան Հայաստանի նոր գրավված տարածքներում կազմավորվում է Հայկական մարզ (Армянская область)՝ վարչական միավորը (1828-1840 թթ.)՝ Էրեվան (Էրիվան, Երևան) կենտրոնով:

² Տե՛ս Буланова О., նշվ. աշխ.:

³ Տե՛ս Jeanneret F.A.M., et Bonhôte J.H., նշվ. աշխ., էջ 279-280:

⁴ Տե՛ս Frédéric DuBois de Montperreux, նշվ. աշխ., հ. I, էջ XI:

այլև ճանապարհորդությունից առաջ բավականին լուրջ ուսումնասիրել էր տեղաբնիկների պատմությունն ու մշակույթը, որին քաջատեղյակ էր: Ավելին, նյութը շարադրելիս նա շրջանառության մեջ է դրել եվրոպական և այլ բազմաթիվ սկզբնաղբյուրներ¹:

Դյու Բուա դը Մոնպերոյի 1834 թ. տարածաշրջան այցելելուց ընդամենը մի քանի տարի առաջ՝ 1829-1832 թթ., «Հայկական մարզ»² նորաստեղծ վարչական միավորի մասին բազմակողմանի և հավաստի վիճակագրական տեղեկատվություն ստանալու նպատակով ցարական կառավարության հանձնարարությամբ Ի. Ի. Շոպենի գլխավորությամբ սկսվում են Հայկական մարզի նկարագրության աշխատանքները: Ռուս պատասխանատու պաշտոնյան «Պատմական հուշարձան Հայկական մարզի կացության մասին՝ այն Ռուսական կայսրությանը միացնելու ժամանակաշրջանում»³ աշխատությունը շարադրելիս, Հայկական մարզին վերաբերող պաշտոնական ամբողջական տեղեկատվությունից զատ, փնտրտել, գտել և թարգմանել է Այսրկովկասի մասին եղած աշխատությունները, իսկ անհրաժեշտության դեպքում գրականություն է ձեռք բերել Փարիզից, Սանկտ-Պետերբուրգից և Մոսկվայից, որոնց շնորհիվ կարողացել է շարադրել Հայաստանի պատմության, աշխարհագրության, ազգագրության և հնագիտության բաժինները⁴:

Ի. Ի. Շոպենն իր աշխատության առաջին գլուխը վերնագրում է այսպես. «Մեծ Հայքի հնագույն աշխարհագրության կարճ նկարագրություն»: Այն սկսվում է հետևյալ պարբերությամբ. «Երկիրը, որը հայտնի է Հայաստան անվամբ, իրենից ներկայացնում էր երբեմնի բավական հզոր պետություն, որը երկարությամբ՝ 1,500 վերստ (1,600 կմ – Վ. Մ., Գ. Ղ.) ձգվում էր Եփրատ գետից մինչև Կուր և Կասպից ծով, իսկ լայնությամբ՝ 1,200 վերստ (1,280 կմ – Վ. Մ., Գ. Ղ.)՝ Լազերի երկրից, Կովսիդայից, Կովկասյան լեռներից և Իբերիայից մինչև Դիարբեքիի հարավային սահմանները: Այս ընդարձակ երկիրը, որը ներառում է շուրջ 1,800,000 վերստ² (2,048,400 կմ² – Վ. Մ., Գ. Ղ.) տարածք, հնագույն ժամանակներից բնակեցված է հայերով: Հայրենիքին համակած դժբախտություններից ստիպված՝ նրանք հաճախ տեղահանվում էին ամբողջ բնակավայրերով և փոխարինվում Փոքր Ասիայում փոխ առ փոխ գերիշխող տարբեր ժողովուրդների նոր վերաբնակներով»⁵:

Իսկ Մեծ Հայքի թագավորության տեղադիրքը և սահմանները նկարագրելիս նա գրում է. «Մեծ Հայքը արևմուտքից սահմանակցել է Փոքր Հայքին, որից բաժանվում էր Եփրատ գետով, հարավում՝ Միջագետքին, Ասորեստա-

¹ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., հ. I, էջ XVII-XXV:

² **Մխիթարյան Վ.**, Հայկական մարզի վարչատարածքային բաժանումը (1828-1840 թթ.), տե՛ս քարտեզ 1:

³ **Шопен И. И.**, նշվ. աշխ., 1232 էջ:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ I, III-IV:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 1:

նին և Քրդստանին, որոնցից բաժանվում էր Տավրոսի լեռնաբազուկներով: Արևելքում սահմանակցում էր Պարսկաստանի Ատրպատական (Ադերբայջան) նահանգի և Կասպից ծովի, իսկ հյուսիսում՝ Ալբանիայի (այժմ Շաքի և Շամախի), Իրերիայի (Վրաստան) և Կովսիդայի (Մինգրելիա, Իմերեթիա և Գուրիա) թագավորության և նրա մաս՝ Տրապեզոնդի (Տրապիզոնի – Վ. Մ., Գ. Ղ.) փաշալիքի հետ»¹:

Հայկական մարզի նկարագրության մեջ նշվում է. «Հայկական մարզը զբաղեցնում է պատմական (Մեծ Հայքի թագավորության – Վ. Մ., Գ. Ղ.) Արարատյան և Սյունիքի մարզերի (աշխարհների – Վ. Մ., Գ. Ղ.) մեծ մասը և Վասպուրականի երկու գավառը»²: Մարզն ունի շուրջ 24,000 վերստ² (կամ 27,314 կմ² – Վ. Մ., Գ. Ղ.)³ մակերես: Ընդհանուր պետական սահմանի երկարությունը շուրջ 480 վերստ է (կամ 512 կմ – Վ. Մ., Գ. Ղ.), որից Թուրքիայի հետ սահմանագծի երկարությունը՝ 230 վերստ է (կամ 245 կմ – Վ. Մ., Գ. Ղ.), իսկ Պարսկաստանի հետ՝ 250 վերստ (կամ 267 կմ – Վ. Մ., Գ. Ղ.): Մարզային սահմանի երկարությունը 430 վերստ է (կամ 458,7 կմ – Վ. Մ., Գ. Ղ.): Սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 910 վերստ (կամ 970,7 կմ – Վ. Մ., Գ. Ղ.)⁴:

Վերոհիշյալ աշխատությունների հեղինակները՝ Դյու Բուա դե Մոնպերոն և Ի. Բ. Շոպենը, հիշյալ կամ դրան նախորդող պատմական ժամանակահատվածներին անդրադառնալիս չէին կարող հիշատակել «ադրբեջանցի» կամ «Ադրբեջան» բառերը՝ թեկուզև ցեղի, ցեղային միության կամ առավել ևս մեկ այլ ձևակերպման համատեքստում, քանի որ այն գոյություն չուներ:

Անդրադառնալով Օ. Բուլանովայի հրապարակած երկրորդ՝ «1833-1834 թթ. Ադրբեջանը և Էրիվանը Դյու Բուա դը Մոնպերոյի նկարներում» հոդվածին՝ նշենք, որ այն առաջինի «տրամաբանական» շարունակությունն է բոլոր առումներով, բացառությամբ, որ այստեղ ներկայացված են նաև Դյու Բուա դե Մոնպերոյի «Ատլասից» 11 նկար՝ իրենց «վերնագրերով»:

Տարիների ընթացքում մեր հետազոտությունների շրջանակներում ստեղծել ենք Հայաստանի և Այսրկովկասի ֆրանսերեն քարտեզների՝ դեռևս անտիպ հավաքածու՝ ուսումնասիրելով մասնավորապես Հայաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի ազգային գրադարաններն ու արխիվները: Բարեբախտաբար մեր տրամադրության տակ ունենք ճանապարհորդ և գիտնական Դյու Բուա դը Մոնպերոյի «Ատլասի» այն նկարներն

¹ Տե՛ս Шопен И. И., նշվ. աշխ., էջ 1-2:

² Տե՛ս նույն տեղում, էջ 250:

³ Ի. Բ. Շոպենը, իր աշխատությունում Հայկական մարզի զբաղեցրած մակերեսին անդրադառնալով, գրել է, որ իր հաշվարկով այն զբաղեցնում է մոտ 24,000 վերստ², ինչը հավասար է 27,314 կմ²: Սակայն մեզ հայտնի գրականության մեջ տարածքի մակերեսը տրվում է շատ ավելի փոքր (20,720 կմ², 21,000 կմ²): Տե՛ս նույն տեղում, էջ 353:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 352-353:

ու դրանց իրական վերնագրերի պատճենները, որոնք ներկայացված են հոդվածում:

Այս դեպքում հոդվածագիրը նենգափոխել է Դյու Բուա դը Մոնպերոյի «Ատլասում» տեղ գտած հեղինակային նկարների վերնագրերը՝ ցանկալին ներկայացնելով որպես իրականություն: Օ. Բուլանովան և նրան հովանավորողներն իրենց կեղծիքը կառուցել են ընթերցողի պարզ վստահության և անիրազեկության վրա: Նրանց այդ պարզունակ «հաշվարկների» հենքում այն է, որ «Ատլասը» իրավամբ հազվադեպ աշխատանք է, և շատ քչերին է հասանելի: Ուստի և նման պայմաններում զեղծարարությունները բացահայտելու հնարավորությունը կարող էր հասնել նվազագույնի:

Ուստի քանի որ խոսքը նկարների մասին է, որոշել ենք ներկայացնել Օ. Բուլանովայի նկարների մի մասը՝ իր իսկ կամայականորեն վերափոխած վերնագրերով, որոնց վրա առկա է azerhistory.com էլեկտրոնային հասցեն: Ավելին, զուգահեռաբար ցուցադրելու ենք նկարների բնագրերը՝ իրական վերնագրերով: Կարծում ենք՝ այս մոտեցումը հնարավորություն կընձեռնի ավելի տեսանելի ներկայացնել կեղծիքները:

Այսպես.

Առաջին նկարը Օ. Բուլանովան վերնագրել է «Озеро Севан-Чейча зимой 1839 года. Эриванское ханство» ձևով: Իրականում, ըստ բնագրի՝ նկարը պետք է ունենար հետևյալ վերնագիրը. «ՏԵՍԱՐԱՆ ՄԵՎԱՆԱ ԼՃԻՑ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, հայացք Չուբուկլուից»¹ (տե՛ս նկար 1):

Նշենք, որ Օ. Բուլանովան վերնագրում սխալ տարեթիվ է հիշատակել: Դյու Բուա դը Մոնպերոն Հայասկական մարզի սահմանը հատել և Սևանա լճի ավազանում է հայտնվել 1834 թ. փետրվարի սկզբներին, այլ ոչ թե 1839 թ.³:

Երկրորդ նկարը Օ. Բուլանովան վերնագրել է «Руины укреплений на реке Араз. Эриванское ханство» ձևով: Իրականում, ըստ բնագրի՝ նկարը պետք է ունենար հետևյալ վերնագիրը. «ՏԵՍԱՐԱՆ ԵՐՈՎԱՆՏԱԳԵՐԴԻ ԱՎԵՐԱԿ-ՆԵՐԻՑ, Արաքսի ափին, Հայաստանում»⁴ (տե՛ս նկար 2): Վերնագրում ակնհայտ երևում է, որ շվեյցարացի ճանապարհորդը իրեն օտարահունչ հայերեն Երվանդակերտ տեղանունը փոքր-ինչ սխալ է տառադարձել, և այն ստացել է Երվանտագերդ ձևը:

Երրորդ նկարը Օ. Բուլանովան վերնագրել է «Руины Джульфы» ձևով:

¹ Չուբուկլու բնակավայրը հայտնի է նաև Ճապոտիկ, Մուրացան, Չիբուխլու ձևերով, այժմ՝ Ծովագյուղ:

Տե՛ս **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 860:

² Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., II, Série, Pittoresque, Pl. XXXIII:

³ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., III, էջ 288, 314:

⁴ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., II, Série, Pittoresque, Pl. XXXVI:

Իրականում ըստ բնագրի նկարը պետք է ունենար հետևյալ վերնագիրը. «ՏԵՍԱՐԱՆ ԶՈՒԼՖԱՅԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԻՅ, Արաքսի ափին (Մեծ Հայք)»¹ (տե՛ս նկար 3): Այս դեպքում ևս Դյու Բուա դը Մոնպերոյի վերնագրում տեղ գտած Մեծ Հայք երկրանունն ու նկարի բնագրում պատկերված խաչքարերը բնավ խոչընդոտ չեն եղել, որ անհեռանկար արատավոր գործելաճ ուրդեգրած Օ. Բուլանովան չկեղծի սկզբնաղբյուրները:

Օ. Բուլանովայի այս հոդվածում տեղ գտած վերոհիշյալ կանխակալ մոտեցման բացահայտումը և կեղծիքների առկայությունը մեզ հիմք են տալիս չանրադառնալ մյուս ութը նկարների ցուցադրմանն ու մեկնաբանությունը:

Հատկանշական է և բնավ պատահական չէ, որ Դյու Բուա դը Մոնպերոն վերոհիշյալ նկարները մակագրել ու դրանցում օգտագործել է Մեծ Հայք-Հայաստան երկրանվանումները որպես հոմանիշներ՝ հավասարության նշան դնելով դրանց միջև: Վստահ ենք, որ նա հստակ գիտակցել է հայ ժողովրդի, հայոց պետականության և հայկական մշակութային ժառանգության բացառիկ նշանակության դերը համամարդկային քաղաքակրթության ձևավորման գործընթացներում:

Վերոբերյալ երկու հոդվածների ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս կարծիք հայտնել առ այն, որ Օ. Բուլանովան շատ վատ է պատկերացնում քննարկվող պատմական ժամանակաշրջանը, ավելին, կարելի է ասել, որ պատշաճ կերպով չի տիրապետում քննարկվող նյութին՝ Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատություններին: Այդուհանդերձ, նա հրապարակել է «դատողություններ», որոնք շատ հեռու են իրականությունից, ունեն միայն քարոզչական ուղղվածություն և իրենցից որևէ գիտական հետաքրքրություն ու կարևորություն չեն ներկայացնում:

Այս պարագայում մեզ համար հստակ են հոդվածագրի մոտեցումները, դրդապատճառները և նպատակները: Կամայական մեկնաբանելով և նենգափոխելով պատմական իրողությունն ու Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատություններում առկա փաստերը՝ նա հետապնդել է մի քանի նպատակ.

ա) շրջանառել այն միտքը, թե իբր մինչև XIX դ. 30-ական թվականները Մեծ Հայք-Հայաստան անունով երկիր երբեք գոյություն չի ունեցել,

բ) ստվեր նետել Դյու Բուա դը Մոնպերո գիտնականի և նրա աշխատությունների ճշմարտացիության վրա,

գ) մեղադրել ռուսներին, որոնք իբր, հանուն իրենց շահի և ի նպաստ հայերի, հովանավորել են հանրահայտ գիտնական ճանապարհորդին՝ «պատմական կեղծիքներ» կատարելու դիմաց,

դ) «ապացուցել», որ Ադրբեջանը հնագույն երկիր է, իսկ ադրբեջանցիները բնիկներ են,

ե) Ադրբեջանին ներկայացնել իբրև հնագույն մշակույթ կրող երկիր:

¹ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., II, Série, Pittoresque, Pl. XXXVII:

Քստմենլի ստի ու կեղծիքի նկատմամբ թուրք-թաթարների հակվածությանն է անդրադարձել անգամ Ի. Ի. Շոպենը: Նա գրում է, որ նրանք սովոր են խաբելուն, եթե մինչև անգամ դրանից օգուտ չունեն, անխղճորեն շողոքորթում են, նենգ են և աչքի են ընկնում պատվի մասին օրենքների չիմացությամբ¹:

Ելնելով վերոբերյալից՝ խորհուրդ կտայինք Օ. Բուլանովային, նրա նմաններին և նրանց հովանավորողներին հաջորդ «քերթություններում» ջանք ու եռանդ չինայել, անպատճառ անդրադառնալ պատմական քառուղիներում աննշան կորսված, երևակայական «Ադրբեջանի և ադբեջանցիների» հետքերի փնտրտուքներին, գուցե այդ դեպքում թույլ տրված կեղծիքները ճշմարտացիությանը ավելի մոտ լինեն: Սակայն, շատ ենք կասկածում արդյունքին, քանզի թուրք-թաթարները անգամ արհեստավարժորեն կեղծելու մտավոր կարողությունից զուրկ տեսակին են պատկանում:

Կարևորելով Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատություններում տեղ գտած տեղեկատվությունը Հայաստանի և հայերի մասին, ներկայացնելով վերոհիշյալ պատմական ժամանակաշրջանը, որը հետագայում շրջադարձային սահման դարձավ Այսրկովկասյան տարածաշրջանում ապրող բնիկ ժողովուրդների և այնտեղ ներթափանցած ցեղերի համար, փորձել ենք անաչառ, հավաստի սկզբնաղբյուրների համադրմամբ, բացահայտել թուրք-թաթարական խառնամբոխի, նրանց առաջնորդ Ի. Ալիևի և հավաքագրված օտարազգի զրչակների վերոհիշյալ կեղծիքներն ու սուտը, որով ողողել են մերօրյա տեղեկատվական-գիտաֆանտաստիկ դաշտը:

Հավելենք, որ մեր կողմից հրատարակության է նախապատրաստվում մի աշխատություն, որտեղ թարգմանաբար կներկայացվի Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոյի վեցհատորյա «Ճանապարհորդությունից» ու «Ատլասից» Հայաստանին և հայերին վերբերող ընդգրկուն հատվածը: Հուսով ենք, որ այն իր ուրույն տեղը կգտնի՝ եվրոպացի հեղինակների հայերի և Հայաստանի մասին հրապարակումների շարքում պատմության, աշխարհագրության, տեղանվանաբանության, քարտեզագրության, երկրաբանության, ջրաբանության, կլիմայի, հնագիտության և ազգագրության մասին արժեքավոր ու անաչառ տեղեկություններ պարունակելու շնորհիվ:

¹ См. у Шопен И. И., нзվ. աշխ., էջ 709-710:


[illegible]

Քարտեզը կազմեց՝ Վ. Մխիթարյան




II. Série. Photographie.

Նկար 1



Озеро Севан-Цейча зимой 1839 года. Эриванское ханство




VUE DU LAC SEVANK, en ARMÉNIE,
prise de Tchouboukton.

Նկար 2



Նկար 3



Вардан Мхитарян, Гоар Гамбарян – *К вопросу о вовлечении иностранных «авторов» в информационную войну*

В информационной войне, развязанной против Армении и Арцаха, на протяжении долгих лет турки и татары последовательно фальсифицировали, по-своему интерпретировали и подтасовывали исторические факты, выдавали желаемое за действительное. Для того чтобы придать достоверность этим «работам», делается попытка в качестве «авторов» привлечь также и завербованных иностранных писак, которые и выполняют заказ. В статье рассмотрены материалы одного из таких иностранных «авторов статей».

Vardan Mkhitryan, Gohar Ghambaryan – *On the Issues of Involvement of Foreign “Authors” in the Information Warfare*

In the information warfare unleashed against Armenia and Artsakh for years, the Turkish-Tatars have continuously falsified, arbitrarily interpreted, distorted historical facts, and presented the desired as a reality. In order to give the illusion of credibility to these “works” among the readers, an attempt has been made to involve the collected foreign blotters as “authors”, who will fulfill the undertaken orders. In this article we have discussed the materials of one of such foreign “article writers”.

Ներկայացվել է 20.08.2020

Գրախոսվել է 23.10.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020